ԳԼՈՒԽ ՄԷԴ.

Ով ոք որ խաբէութեամբ և գաղտնի եթէ այր և կամ եթէ կին որ ամուսնացի ընդ երկու կին, և կամ թէ ընդ երկուս այրս, կինն առաջին ամուսնացեալ ընդ առն մնայ նմայ ամուսին կնութեան, և եթէ առն երկուց կանաց ամուսնացեալ ունիցի զաւակս 'ի երկրորդ կնոջէ թողեալ է 'ի կամս երկրորդ կնոջ, եթէ կամեսցի ինքն ունենալ զաւակն պահէ վասն իւր, եթէ ոչ տացէ առ առն, և պարտ է ընդունիլ և կերակրել զարգուցանել նոյն զաւակաց որպէս անօրէնութեան զաւակս իւր։

ԳԼՈՒԽ ՄԷԵ.

Ամենայն հրահայելիք այն որ զուտն է և անարատ և կամ 'ի բովս մաքրեալ նմայ ծանիցեն աստիճան մի հարիւր, այսինքն մաքուր և կատարեալ և ով ոք 'ի նմանէ աստիճանաւ քաշագոյն արժանաւորութիւնն կացցէ ըստ համեմատութեան աստիճանի։

ԳԼՈՒԽ ՄԷԶ.

Դահեկան հայոց տպեցեալ 'ի վերայ ոսկոյ, երծաթոյ, կապարի և 'ի վերայ պղնձոյ, ըստ իւրաքանչիւր աստիճանի, և ծանրութեան կշռոյ այսինքն որպէս 'ի վայր։